EU4Energy

Covenant of Mayors
for Climate & Energy
Eastern Partnership

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

10

ՏԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ


ԲԵԼԱՌՈՒՍ
ՈՒԿՐԱԻՆԱ
ՄՈԼԴՈՎԱ


ՎՐԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆ

ԵՄ-ն աջակցում է «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» նախաձեռնությանը 2011 թվականից: Տարածաշրջանում նախաձեռնության հաջողությունը ցուցադրում են 500 քաղաքներ, որոնք մինչ այժմ ստորագրել են այն: Սա դարձնում է այն Քաղաքապետերի գլոբալ դաշնագրի ամենաակտիվ տարածաշրջաններից մեկը և վկայում է տեղական, տարածքային և ազգային իշխանությունների պարտավորության մասին՝ իրականացնելու արդյունավետ գործողություններ կլիմայական ճգնաժամը հաղթահարելու և բնակության համար առավել նպաստավոր քաղաքային տարածքներ ստեղծելու համար: Սա բազմաթիվ քայլերից մեկն է, որն անհրաժեշտ է Եվրոպական կանաչ գործարքը իր՝ Եվրոպան որպես աշխարհի առաջին կլիմայապես չեզոք աշխարհամասի տեսլականով իրականություն դարձնելու համար:

Այս աշխատանքում հաջողության հասնելու համար մենք պետք է ապահովենք, որ բոլորը՝ կառավարություններից մինչև առանձին քաղաքացիներ, մասնակցեն և ներգրավված լինեն: Քաղաքապետերի դաշնագիրը եզակի ունակություն ունի համախմբելու կառավարման բոլոր մակարդակները՝ կոնկրետ լուծումներ առաջարկելով փոփոխության հասնելու: Դա նրա հաջողության հիմնական գրավականն է և կշարունակի մնալ այդպիսին:

Այսօր մենք նշում ենք առաջին տասը տարիների ձեռքբերումները: Սա մեր համագործակցության միայն սկիզբն է. քաղաքներն ու ավանները դեպի կայունություն իրենց անցման սկզբնական փուլում են: ԵՄ-ն ընդլայնելու է իր աջակցությունը Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքին և ավելի լայն «կանաչ» անցմանը ֆինանսավորման և տեխնիկական փորձաքննության միջոցով: Մենք ակնկալում ենք շարունակել մեր համագործակցությունը՝ Արևելյան գործընկերության երկրների կլիմայական դիմակայունությունը բարձրացնելու և բոլորի համար կայուն, կլիմայապես չեզոք ապագա ապահովելու համար:

Լուրենս Մերեդիթ
Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրենության Արևելյան հարևանության հարցերով տնօրեն

Քաղաքապետերի դաշնագրի 10 տարին Արևելյան հարևանության երկրներում. ԵՄ աջակցության նախագծից մինչև քաղաքների անցում

Ցածր ածխածնային տնտեսությունը և մարդկանց կյանքի որակի բարելավումը համայնքների գլխավոր մարտահրավերներից են ամբողջ աշխարհում: Սանիտարական ճգնաժամը չի փոխել առաջնահերթությունները, ընդհակառակը, այն ամրապնդել է անհապաղ գործողությունների հրատապ անհրաժեշտությունը: Քաղաքները ցանկանում են պարտավորություններ ստանձնել, և Քաղաքապետերի դաշնագիրն ապացուցել է, որ գործողությունների իրականացման հարցում նրանց աջակցելու ճիշտ գործիք է:

Իր տասնամյա գործունեության ընթացքում Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքի գրասենյակը միավորել է ազգային շահառուներին, տարածքային իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակությանը և Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի գրեթե 500 համայնքներին: Տարածաշրջանում ավելի ու ավելի շատ տեղական իշխանություններ են միացել նախաձեռնությանը՝ էներգետիկ և կլիմայական անցման ուղին սկսելու, իրենց փորձով կիսվելու, լավագույն գործելակերպը սովորելու, տեխնիկական փորձաքննության և ֆինանսավորման հնարավորություններից օգտվելու, միմյանց խրախուսելու և համատեղ ջանքերով ընդհանուր խնդիրների համար արդյունավետ լուծումներ փնտրելու համար:

Արևելյան գործընկերության երկրներին հաջողվեց Դաշնագրի՝ ուժեղ և աջակցող համայնք ստեղծել, որտեղ Դաշնագրի ազգային և տարածքային համակարգողները, ինչպես նաև աջակիցները կարևոր դեր են խաղում՝ օգնելով ստորագրողներին՝ կատարելու CO_2-ի կրճատման իրենց պարտավորությունները և կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ իրականացնելու: Սա մեծ ձեռքբերում է մեզ համար. այն ծառայել է որպես աշխարհի այլ մասերում Դաշնագրի տարածաշրջանային համայնքներ ստեղծելու նախագիծ: Սա զուգորդվում է ՔԴ Արևելքի ուժեղ թիմի հետ, որը նվիրված է կարողությունների զարգացման, տեխնիկական խորհրդատվության, ԿԷԶԿՊԳԾ-ի զարգացման, հաղորդակցության և խթանման գործողությունների ոլորտում պարբերական աջակցություն ցուցաբերելուն, ինչը տարածաշրջանում Դաշնագրի ստորագրողների համար լայն հնարավորություններ է բացել և նոր հեռանկարներ է նշանավորել:

«Էներջի Սիթիզ» կազմակերպությունը և կոնսորցիումի բոլոր գործընկերներն իսկապես հպարտ են, որ այս տասը տարիների ընթացքում ուղեկցել և աջակցել են Արևելյան գործընկերության երկրներում Քաղաքապետերի դաշնագրի ընտանիքին: Նրանց ուշագրավ արդյունքները և ձեռքբերումները դրական ազդեցություն են ունենում տարածաշրջանի շատ այլ համայնքների վրա: Նրանք առաջ են շարժվում և ուժեղացնում իրենց ջանքերը կլիմայական չեզոքության հասնելու ճանապարհին՝ լինելով Գլոբալ դաշնագրի համայնքի առաջնագծում:

Քլեր Ռումե
«Էներջի Սիթիզ» կազմակերպության տնօրեն

Քաղաքապետերի դաշնագրի ուղենիշերը

«Քաղաքապետերի Դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» ծրագիրը Եվրոպական միության նախաձեռնությունն է, որում ներգրավված են տեղական և տարածքային իշխանություններ, որոնք կամավոր պարտավորություն են ստանձնել իրենց տարածքներում իրականացնել ԵՄ կլիմայական և էներգետիկ նպատակները: Ներկայումս Քաղաքապետերի դաշնագիրը դարձել է քաղաքային կլիմայի և էներգիայի ոլորտում աշխարհում ամենահավակնոտ նախաձեռնությունը՝ միավորելով ավելի քան 10,600 ստորագրողների 61 երկրներից, որոնք ներկայացնում են ավելի քան 337 միլիոն քաղաքացիների:

ԵՄ նախաձեռնության էվոլյուցիան

2006
Էներգաարդյունավետության ԵՄ գործողությունների ծրագրի գերակա գործողություն

2008
Քաղաքապետերի դաշնագրի մեկնարկ
-20% CO_2 մինչև 2020 թ.

2011
ՔԴ Արևելք նախագծի
I փուլի մեկնարկ
-20% CO_2 մինչև 2020 թ.

2014
«Քաղաքապետերը հարմարվում են» նախաձեռնության մեկնարկ

2016
ՔԴ Արևելք նախագծի
II փուլի մեկնարկ
ՔԴ նոր էներգետիկ և կլիմայական թիրախներ
-30% CO_2 մինչև 2030 թ.

2021
Էներգետիկ և կլիմայական գործողությունների հետագա առաջխաղացում

Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքը (ՔԴ Արևելք) Եվրոպայից դուրս Քաղաքապետերի դաշնագրի ամենամեծ նախաձեռնությունն է, որը նպատակ ունի միավորելու Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) տեղական և տարածքային իշխանություններին կայուն էներգետիկ քաղաքականության իրականացման, հանածո վառելիքներից նրանց կախվածության նվազեցման, էներգիայի մատակարարման անվտանգության բարձրացման և կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված համաշխարհային շարժման խթանման հարցում:

Ավելի քան **480 ստորագրողներ**, որոնք ներկայացնում են ԱԼԳ երկրների գրեթե **30 մլն քաղաքացիների**, միացել են նախաձեռնությանը՝ կամավոր պարտավորվելով հասնել ավելի քան **27 մլն տոննա CO_2-ի կրճատման**, ինչպես նաև իրականացնել կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ:

ՔԴ Արևելքի փուլերը

Փուլ I
2011 – 2015

- Ղազախստան
- Ղրղզստան
- Տաջիկստան
- Թուրքմենստան
- Ուզբեկստան

Փուլ II
2016 – 2021

- Հայաստան
- Ադրբեջան
- Բելառուս
- Վրաստան
- Մոլդովա
- Ուկրաինա

ՔԴ Արևելք համայնքը փաստերով և թվերով

ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐ



- Պարտավորվել է **մինչև 2020 թ. առնվազն 20%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները
- Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**
- **Կասեցված** ստորագրողներ

Ստորագրողներն ընդունում են նախաձեռնությանը իրենց անդամակցության կասեցումը, եթե նրանք սահմանված ժամկետում չեն ներկայացնում իրենց Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրերը (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) և մշտադիտարկման հաշվետվությունները: Ստորագրողները պահանջած փաստաթղթերը ներկայացնելուն պես վերահինտեգրվում են որպես Քաղաքապետերի դաշնագրի անդամներ:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ



* Այսուհետ տվյալները ներկայացվում են 2021 թվականի մայիսի 1-ի դրությամբ

** երկրի ամբողջ բնակչությունից

Աճի դինամիկա



CO2 արտանետումների կրճատման հետ կապված պարտավորությունները*

2020 (20%) և 2030 (30%) CO_2 տ CO_2/տարի	ՀԱՅԱՍՏԱՆ 292.5 հզր	ԱԴՐԲԵՋԱՆ 65 հզր	ԲԵԼԱՌՈՒՍ 1.3 մլն	ՎՐԱՍՏԱՆ 903 հզր	ՄՈԼԴՈՎԱ 167.2 հզր	ՈՒԿՐԱԻՆԱ 24.7 մլն	ԸՆԴԱՄԵՆԸ 27.4 մլն
ՀԱՎԱՍԱՐ Է ① Տնկվելիք ծառեր	13.3 մլն	3 մլն	61 մլն	41 մլն	7.6 մլն	1.1 մլրդ	1.2 մլրդ
② Նոր մեքենաների օգտագործման դադարեցում	187 հզր	42 հզր	857 հզր	579 հզր	108.6 հզր	15 մլն	17.6 մլն
③ ԼԵԴ-երով փոխարինված հին շիկացման լամպեր	9.8 մլն	2.2 մլն	45 մլն	30.2 մլն	5.6 մլն	826 մլն	917 մլն

1. Ծառի CO_2-ի կլանում՝ տարեկան 22 կգ CO_2
2. Նոր մեքենայի CO_2 արտանետում՝ տարեկան 1,56 տ CO_2
3. Մեկ շիկացման լամպի փոխարինումը ԼԵԴ լամպով հանգեցնում է տարեկան 0.029 տ CO_2 արտանետումների կրճատման

* Համաձայն Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) հաստատված ծրագրի

Դաշնագրի համայնքը

Դաշնագրի համակարգողներ

Ազգային և ենթազգային պետական մարմիններ, որոնք ռազմավարական ուղղորդում, տեխնիկական և ֆինանսական աջակցություն են տրամադրում ՔԴ ստորագրողներին և նախաձեռնությանը միանալու ցանկություն ունեցող համայնքներին: Դաշնագրի համակարգողները սատարում են նրանց հավակնոտ նպատակներն իրականացնելու հարցում և իրենց ազդեցության ոլորտում խթանում են Քաղաքապետերի դաշնագիրը: Մասնավորապես, Դաշնագրի համակարգողներն օգնում են ստորագրողներին Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների իրենց ծրագրերը մշակելու և իրականացնելու գործում:

Դաշնագրի աջակիցներ

Տեղական կամ տարածքային իշխանությունների ցանցերը և ասոցիացիաները, գործակալությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որոնք պարտավորություն են ստանձնել իրենց մասնագիտացման ոլորտներում և կառավարման տարբեր մակարդակներում աջակցելու ՔԴ ստորագրողներին: Նրանք օգտագործում են իրենց շահերի պաշտպանության, հաղորդակցության և ցանցային կարողությունները՝ նախաձեռնությունը խթանելու և ՔԴ ստորագրողների հանձնառությունների իրականացմանն աջակցելու համար:

	Ազգային 10	Տարածքային 15	Դաշնագրի աջակիցներ 14
ՀԱՅԱՍՏԱՆ	• Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		• Հայաստանի համայնքների միություն • Էներգախնայողության հիմնադրամ • Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ԱԴՐԲԵՋԱՆ	• Ադրբեջանի Հանրապետության էներգետիկայի նախարարություն		
ԲԵԼԱՌՈՒՍ	• Բելառուսի Հանրապետության Ստանդարտացման պետական կոմիտեի էներգետիկ արդյունավետության վարչություն • Բելառուսի Հանրապետության բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պաշտպանության նախարարություն		• Ինտերակցիա հիմնադրամ • «Էկոփարթներշիփ» միջազգային հասարակական կազմակերպություն
ՎՐԱՍՏԱՆ	• Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն • Վրաստանի շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղատնտեսության նախարարություն	• Գուրիայի մարզի պետական ներկայացուցիչ • Մցխեթա-Մթիանեթի մարզի պետական ներկայացուցիչ • Կախեթի մարզի պետական ներկայացուցիչ	• Վրաստանի տեղական իշխանությունների ազգային ասոցիացիա (NALAG) • Էներգաարդյունավետության կենտրոն՝ Վրաստան • Լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման կովկասյան ցանց
ՄՈԼԴՈՎԱ	• Էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարարություն • Գյուղատնտեսության, տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարություն		• Էներգախնայողության և վերականգնվող աղբյուրների դաշինք (AEER) • Տեղական իշխանությունների համագումար (CALM) • Մոլդովայի Հանրապետության շրջանային խորհուրդների միություն
ՈՒԿՐԱԻՆԱ	• Ուկրաինայի համայնքների և տարածքների զարգացման նախարարություն • Ուկրաինայի շրջակա միջավայրի պաշտպանության և բնական պաշարների նախարարություն	• Մարզային պետական մարմիններ՝ Չեռնիգով, Դոնեցկ, Խերսոն, Կիրովոգրադ, Կիև, Լվով, Պոլտավա, Վիննիցիա, Վոլին • Մարզային խորհուրդներ՝ Դնեպրոպետրովսկ, Խարկով • Մեժհիրյա շրջանի խորհուրդ (բարեփոխումների փուլում)	• Տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր ասոցիացիա «Ուկրաինայի էներգաարդյունավետ քաղաքներ» ասոցիացիա • Միավորված տարածքային համայնքների ասոցիացիա • Տեղական ինքնակառավարման մարմինների համաուկրաինական ասոցիացիա «Ուկրաինական քաղաքների ասոցիացիա»

28 ՍՏՈՐԱԳՐՈՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

7 Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20%-ով** կրճատել CO_2- ի արտանետումները

20 Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30% -ով** կրճատել CO_2- ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**

1 **Կասեցված** Ստորագրողներ

5 Ստորագրողներ, որտեղ իրականացվել են/ իրականացվում են **ՔԴ ցուցադրական նախագծեր**



յուրաքանչյուր **2-րդ** քաղաքացին բնակվում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **59.9%**-ը

«Քաղաքապետերի դաշնագիրը եզակի նախաձեռնություն է, որը Հայաստանում արդեն իսկ միավորել է 28 տեղական ինքնակառավարման մարմինների, որոնք հանձն են առել նպաստելու կայուն, կանաչ և կլիմայապես դիմակայուն զարգացմանը, ինչը համահունչ է էներգետիկայի և կլիմայի ոլորտում ազգային ռազմավարությանը: Վստահ եմ, որ հետևողական աջակցությունը տեղական իշխանություններին, որոնք քաղաքական կամք են ցուցաբերել՝ անդամակցելու եվրոպական կամավորական հիմնական այս շարժմանը, ի վերջո կարևոր դեր է ունենալու կլիմայապես չեզոք զարգացման ուղու անհերքելի օգուտները լուսաբանելու և կլիմայի գլոբալ փոփոխության դեմ պայքարում հաջողության հասնելու գործում»:

Աշոտ Գիլոյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ, ԴԱՀ

Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **11**

Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **11**

Ստորագրողների թվի աճը



Լավագույն գործելակերպ

• Սպիտակ. բազմաբնակարան շենքերի ամբողջական ջերմամեկուսացում

Ամբողջությամբ նորոգվել են հինգ բազմաբնակարան շենքեր, ինչը հանգեցրել է շուրջ 65% էներգիայի խնայողության, բնակարաններում ավելի լավ ջերմային հարմարավետության, շուկայական արժեքի բարձրացման և տարեկան 25,000 եվրո գնահատված դրամական խնայողության:

• Երևան. փողոցային լուսավորության համակարգերի էներգաարդյունավետ արդիականացում

Լուսադիոդային (ԼԵԴ) տեխնոլոգիաների հիման վրա լուսավորության նոր լուծումների ներդրումը հանգեցրեց տարեկան 618 ՄՎտժ էներգիայի խնայողության, տարեկան 274 տ CO_2 ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման և շահագործման ու սպասարկման ծախսերի՝ տարեկան 65,470 եվրո խնայողության:

2014 թվականին «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը միանալու շնորհիվ Սպիտակ համայնքի բնակիչների հոգեբանությունն ու գաղափարախոսությունը փոխվել են: Մենք բոլորս ավելի էներգաարդյունավետ ենք դարձել: Տեսնելով Սպիտակ համայնքի Դաշնագրին միանալու օգուտները՝ Սպիտակի ավագանին որոշեց միանալ դաշնագրի նոր՝ ավելի հավակնոտ փուլին՝ «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը: Հուսով ենք, որ մոտ ապագայում մեր համայնքի հաջողությունները ավելի մեծ կլինեն, ինչի արդյունքում առաջին հերթին կշահեն համայնքը և համայնքի բնակիչները»:

Գագիկ Սահակյան
Սպիտակի քաղաքապետ, Հայաստանում
Քաղաքապետերի դաշնագրի ակումբի նախագահ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

8 ՍՏՈՐԱԳՐՈՂ

1 Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները

7 Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**

յուրաքանչյուր **13-րդ** քաղաքացին բնակվում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **8%**-ը



Ստորագրողների թվի աճը



Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **2**

Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **1**

Ներկայացված մշտադիտարկման զեկույցներ **1**

«Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքը օգտակար հարթակ է կայուն էներգիայի և կլիմայի ոլորտում մեր մասնագետների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների համար Արևելյան գործընկերության երկրների և Եվրոպական միության գործընկերների հետ հանդիպումների, քննարկումների և փորձի փոխանակման համար: Առաջիկա տասնամյակում՝ մինչև 2030 թվականը, մեր երկիրը, համաձայն այս տարվա փետրվարին Ադրբեջանի Հանրապետության նախագահ պարոն Իլհամ Ալիևի կողմից հաստատված «Ադրբեջան 2030՝ սոցիալ-տնտեսական զարգացման ազգային առաջնահերթություններ» հայեցակարգի, մտադիր է դառնալ «կանաչ աճի» երկիր և «կանաչ էներգիայի» գոտիներ զարգացնել: Այս առումով արդեն մեկնարկել են օրենսդրական դաշտի բարելավման, քամու և արևի էլեկտրակայանների վրա օտարերկրյա ներդրումների վրա հիմնված կոմունալ ծրագրերի իրականացման, «Խելացի քաղաք» և «Խելացի գյուղ» հայեցակարգերի մշակման և էներգաարդյունավետության այլ գործողությունների ուղղությամբ աշխատանքները: Հուսով ենք, որ Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքին մեր շարունակական ակտիվ մասնակցությունը կնպաստի մեր Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության ազգային առաջնահերթությունների հաջող իրականացմանը»:

Սամիր Վելիև
Ադրբեջանի էներգետիկայի փոխնախարար, ԴԱՀ

58 ՍՏՈՐԱԳՐՈՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ



3	Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20% -ով** կրճատել CO_2- ի արտանետումները
52	Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30% -ով** կրճատել CO_2- ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**
3	**Կասեցված** ստորագրողներ
4	Ստորագրողներ, որտեղ իրականացվել են/ իրականացվում են **ՔԴ ցուցադրական նախագծեր**

յուրաքանչյուր **2-րդ** քաղաքացին ապրում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **45%**-ը

Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ)	**21**
Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ)	**13**
Ներկայացված մշտադիտարկման զեկույցներ	**8**

«Քաղաքապետերի դաշնագիր նախաձեռնության համաձայն իրենց՝ մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի արտանետումները առնվազն 30%-ով կրճատելու պարտավորություններն իրականացնելով՝ տեղական իշխանություններն աջակցում են Բելառուսին՝ կատարելու Փարիզի համաձայնագրով նախատեսված մեր ազգային պարտավորությունները: Բացի այդ՝ նրանց աշխատանքի կարևոր մասը կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներն են՝ հիմնված էկոլոգիական լուծումների վրա»:

Բոլեսլավ Պիրշտուկ
Բելառուսի Հանրապետության բնական պաշարների և շրջակա միջավայրի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԴԱՀ

«Մենք համարում ենք, որ ՔԴ ստորագրողների կողմից մշակված ԿԷԶԿՊԳԾ-ները երկարաժամկետ պլանավորման արդյունավետ գործիք են՝ էներգաարդյունավետության բարելավման և վերականգնվող աղբյուրների օգտագործման մեծացման, ինչպես նաև պլանավորված միջոցառումների իրականացման համար ֆինանսավորում ներգրավելու համար: Համայնքային և շրջանային իշխանությունների նման գործողությունները լիովին համահունչ են 2021-2025 թվականների «Էներգախնայողություն» պետական ծրագրին և նպաստում են դրա խնդիրների և ցուցանիշների իրականացմանը»:

Անդրեյ Մինենկով
Բելառուսի Հանրապետության Ստանդարտացման պետական կոմիտեի էներգետիկ արդյունավետության վարչության գիտատեխնիկական քաղաքականության և արտաքին տնտեսական հարաբերությունների գրասենյակի ղեկավար, ԴԱՀ

Ստորագրողների թվի աճը



Լավագույն գործելակերպ

• Բարանավիչի. քաղաքային կեղտաջրերի մաքրման կայանի վրա գտնվող կենսագազի համակարգ
Բարանավիչին Բելառուսի առաջին համայնքն է, որը տիրոջ վերականգնվող էներգիայի վերածող կենսագազային տեղակայանք է շահագործում:

• Պոլակ. PubLiCity՝ փողոցային լուսավորության արդիականացում
Բելառուսի հանրային լուսավորության արդիականացման ամենամեծ նախագծի շրջանակում Պոլակում տեղադրվել են խելացի կառավարման համակարգով գրեթե 2000 ԼԵԴ լուսատուներ, իսկ 26 քաղաքային շենքեր, հուշարձաններ և այլ վայրեր հագեցվել են արդյունավետ ճարտարապետական լուսավորությամբ:

«Լինելով Բելառուսում առաջիններից մեկը, որը միացավ «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը՝ Նավահրուդակ շրջանն արդեն հաջող արդյունքներ է գրանցել էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի բնագավառում: Տարածաշրջանը երկրի առաջատարն է այնպիսի բնական ռեսուրսների օգտագործման մեջ, ինչպիսիք են քամին և արևը՝ հայտնի լինելով որպես հողմային տուրբինների երկիր: 2020 թվականին ՎԷԱ-ն ծածկեց շրջանի կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի 55% -ը: Այսօրվա դրությամբ մենք ունենք ավելի քան 6 մլն եվրո արժողության տեխնիկական աջակցության մի քանի նախագծերի իրականացման անգնահատելի փորձ: Ներգրավված ներդրումները նպաստում են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը, ինչը նշանակալի ներդրում է մոլորակի պահպանման մեջ ապագա սերունդների համար ընդհանրապես և մեր տեղական համայնքի համար մասնավորապես»:

Ալլոնա Սիալևիչ
Նավահրուդակի շրջանի գործադիր կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

24 ՍՏՈՐԱԳՐՈՂ

3 Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները

21 Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**

2 Ստորագրողներ, որտեղ իրականացվել են/իրականացվում են **ՔԴ ցուցադրական նախագծեր**

յուրաքանչյուր **2-րդ** քաղաքացին ապրում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **63%**-ը



«Էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկան երկրի ռազմավարական էներգետիկ քաղաքականության հիմնական ուղղություններում ներառելով՝ կառավարությունը Վրաստանի ստորագրողներին օգնում է կատարելու Դաշնագրի պարտավորությունները, ամրապնդելու դիմակայունությունը կլիմայի փոփոխությանը և նպաստելու երկրի կայուն զարգացմանը»:

Նատելա Թուրնավա
Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար, ԴԱՀ

Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ)	**10**
Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ)	**10**
Ներկայացված մշտադիտարկման զեկույցներ	**1**

Ստորագրողների թվի աճը



«Վրաստանը գիտակցում է համայնքների էական դերը ազգայնորեն որոշված ներդրումների (NDC) նպատակի իրականացման գործում, հատկապես այն համայնքների, որոնք Քաղաքապետերի դաշնագրի ստորագրող կողմ են: Ուղղահայաց համակարգման ամրապնդման նպատակով Կլիմայի փոփոխության հարցերով բարձր մակարդակի խորհուրդը, որը ստեղծվել է 2020 թվականին, հատուկ տեղ է հատկացրել ՔԴ աշխատանքային խմբի նախագահի համար»:

Լևան Դավիթաշվիլի
Վրաստանի շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղատնտեսության նախարար, ԴԱՀ

«Ռուսթավին երկրի կարևոր արդյունաբերական կենտրոններից մեկն է, և էկոլոգիական իրավիճակը մեր քաղաքի յուրաքանչյուր բնակչի համար առաջնային խնդիր է: 10 տարի լինելով Քաղաքապետերի դաշնագիրը ստորագրող՝ Ռուսթավին բոլոր հիմքերն ունի ասելու, որ մենք հաջողությամբ կատարում ենք Դաշնագրի պարտավորությունները, այն է՝ փոխել քաղաքային էկոհամակարգը դեպի լավը»:

Իրակլի Տաբաղուա
Ռուսթավիի քաղաքապետ

Լավագույն գործելակերպ

• Սիղնաղ. Կանաչ էներգիա Էրիսմեդիի երեխաների համար
Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրումը հանգեցրեց տարեկան 5 ՄՎտժ մաքուր էներգիայի արտադրության, ինչն իր հերթին հանգեցրեց մանկապարտեզի էներգետիկ կախվածության 15%-ով նվազեցմանը և տարեկան 11 տոննա CO_2-ի կրճատմանը:

•Ախմետա, Կազբեգի, Գորի, Մցխեթա. Էլեկտրականություն բաշխիչ ցանցի կողմից չսպասարկվող գյուղերի համար
Ծրագիրն իրականացրեց ՖՎ միկրոարևային էներգիայի համակարգերի տեղադրում՝ 87 լեռնային գյուղերի էլեկտրաֆիկացման նպատակով: Արդյունքում արտադրվել է 156 ՄՎտժ վերականգնվող էներգիա, տարեկան կրճատվել է 15,6 տ CO_2 և գրանցվել տարեկան միջինում 7,200 եվրո դրամական խնայողություն:

68 ՍՏՈՐԱԳՐՈՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ



12	Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները
42	Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30%-ով** կրճատել CO_2-ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**
14	**Կասեցված** ստորագրողներ
4	Ստորագրողներ, որտեղ իրականացվել են/ իրականացվում են **ՔԴ ցուցադրական նախագծեր**

յուրաքանչյուր **3-րդ** քաղաքացին ապրում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **36.4 %**-ը

Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **23**

Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **11**

Ներկայացված մշտադիտարկման զեկույցներ **6**

«Մոլդովայի Հանրապետությունը, համաձայն իր՝ մինչև 2030 թվականը էներգետիկ ռազմավարության, առաջնահերթություն է տվել և՛ էներգաարդյունավետությանը, և՛ վերականգնվող էներգիային՝ որպես կայուն զարգացման ռազմավարական հենարանի երկու կարևորագույն տարրերի՝ լինելով էներգետիկ համայնքի առաջին երկրներից մեկը, որը փոխառեց և իրականացրեց համապատասխան ոլորտում ԵՄ օրենսդրությունը: Քաղաքապետերի դաշնագիրը, որպես «ներքևից վերև» նախաձեռնություն, էականորեն նպաստում է ազգային պարտավորությունների կատարմանը և ցույց է տալիս, թե ինչպես են եվրոպական կայուն էներգետիկ քաղաքականությունները վերածվում շոշափելի արդյունքների և ազդեցության Մոլդովայի քաղաքացիների համար»:

Միխայիլ Լուպացու
Էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար, ԴԱՀ

«Մոլդովայի Հանրապետությունը վավերացրել է Փարիզի համաձայնագիրը, և չորրորդ երկիրն է, որն իր երկրորդ ազգայնորեն որոշված ներդրումը ներկայացրեց ՄԱԿ ԿՓՇԿ-ին (UNFCC)՝ պարտավորվելով մինչև 2030 թվականը առնվազն 70%-ով նվազեցնել իր ջերմոցային գազերի արտանետումները: Քաղաքապետերի դաշնագիր նախաձեռնությունը համախմբում է համայնքներին՝ ազգային նպատակների իրականացմանը նպաստելու նպատակով՝ գործնական քայլեր ձեռնարկելով տեղական մակարդակում և այդպիսով եվրոպական և համաշխարհային մակարդակներում կլիմայի փոփոխության օրակարգում իր փոքր ներդրումն ունենալով»:

Իոն Պերժու
Գյուղատնտեսության, գյուղական զարգացման և շրջակա միջավայրի նախարար, ԴԱՀ

Ստորագրողների թվի աճը



Լավագույն գործելակերպ

• Կալարասի. Մոլդովայի ամենաէներգաարդյունավետ շենքը
DoReMiCi մանկապարտեզը կառուցվել է գերմանական պասիվ տան չափորոշիչների համաձայն՝ եվրոպական էներգաարդյունավետության նորմերին համապատասխան: Նրա տարեկան պահպանման ծախսերը 90%-ով ցածր են «դասական» մանկապարտեզի շենքի ծախսերից:

• Կանտեմիր և Օկնիտա. փողոցային լուսավորության արդիականացում
Նորարարական տեխնոլոգիաներ կիրառելով՝ ընդհանուր առմամբ 15,000 քաղաքացի ունեցող երկու փոքր համայնքներ հասան CO_2-ի տարեկան 268 տ նվազեցման և ավելի քան 68,000 եվրո դրամական խնայողության: Ծրագիրն Արևելյան գործընկերության երկրների համար ԵՄ կայուն էներգիայի մրցանակի դափնեկիր է:

«Կանտեմիրի համար եվրոպական ՔԴ ընտանիքին անդամակցությունը քաղաքը փոխելու շարունակական գործընթացի սկիզբ էր նշանակում: 2013 թվականից ի վեր մեզ հաջողվել է իրականացնել ցուցադրական նախագծեր և տեղական մակարդակում բարելավել էներգաարդյունավետության հետ կապված իրավիճակը: Մեզ համար Քաղաքապետերի դաշնագիրը խթան է Կանտեմիրը եվրոպական կանաչ քաղաքի վերածելու համար»:

Ոսման Զուբաչուկ
Կանտեմիրի քաղաքապետ

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

295 ՍՏՈՐԱԳՐՈՂ

64 Պարտավորվել է մինչև **2020 թ. առնվազն 20% -ով** կրճատել CO_2- ի արտանետումները

195 Պարտավորվել է մինչև **2030 թ. առնվազն 30% -ով** կրճատել CO_2- ի արտանետումները և իրականացնել **կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ**

36 Ստորագրողներ, որտեղ իրականացվել են/ իրականացվում են **ՔԴ ցուցադրական նախագծեր**

17



յուրաքանչյուր **2-րդ** քաղաքացին ապրում է ՔԴ ստորագրողների տարածքում

երկրի ընդհանուր բնակչության **51.2%** -ը

«Տեղական ինքնակառավարման համակարգի վերջին բարեփոխումը էներգետիկ կառավարման բարելավման և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության, մասնավորապես արտաքին ֆինանսավորման աղբյուրներ և ներդրումներ ներգրավելու մեծ հնարավորություններ է բացել Ուկրաինայում ՔԴ-ն ստորագրողների համար: Այս համատեքստում մեր առաքելությունն է աջակցել նրանց տեղական կայուն էներգետիկ զարգացման քաղաքականության իրականացման գործում, ինչը, ի վերջո, կօգնի հասնելու էներգաարդյունավետության ազգային նպատակների իրականացմանը»:

Վասիլ Լոգինսկի
Ուկրաինայի համայնքների և տարածքների զարգացման առաջին փոխնախարար, ԴԱՀ

Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **163**

Ընդունված Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրեր (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) **78**

Ներկայացված մշտադիտարկման զեկույցներ **59**

Ստորագրողների թվի աճը



«Մեր օրակարգի կարևոր խնդիրը մեր համայնքների հարմարվելն է կլիմայի փոփոխությանը և դրա հնարավոր բացասական ազդեցությանը: «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությունը ստորագրողներին հնարավորություն է տալիս մշակելու և իրականացնելու կլիմայի փոփոխությանը հարմարվողականության իրենց ռազմավարությունները: Որպես ՔԴ ազգային համակարգող՝ նախարարությունը նպաստում է դրանց իրականացմանը և այս գործընթացի կայունության ապահովմանը»:

Իրինա Ստավչուկ
Ուկրաինայի շրջակա միջավայրի պաշտպանության և բնական պաշարների Եվրոպական ինտեգրման հարցերով փոխնախարար, ԴԱՀ

«Մենք Քաղաքապետերի դաշնագրում գտել ենք էներգաարդյունավետության բարելավման և հանրային, բնակելի և տնային տնտեսությունների էներգետիկ անկախության հասնելու նոր հեռանկարներ՝ մեր քաղաքի կայուն զարգացումն ապահովելու և մեր բնակիչների կենսամակարդակը զգալիորեն բարձրացնելու համար»:

Ալեքսանդր Սիմչիշին
Խմելնիցկիի քաղաքապետ

Լավագույն գործելակերպ

• Մարիուպոլ. Էներգետիկ կառավարման ISO 50001 համակարգ
Էներգետիկ կառավարման արդյունավետ համակարգի ներդրումը քաղաքին թույլ տվեց էներգաարդյունավետության ոլորտում տասնյակ ծրագրեր իրականացնել և CO_2- ի և էներգիայի սպառման նվազեցման հարցում տպավորիչ արդյունքների հասնել:

• Միրգորոդ. կենտրոնացված ջեռուցման համակարգի արդիականացում
Ծրագիրը համայնքին հնարավորություն տվեց ավելացնելու վերականգնվող էներգիայի (կենսազանգվածի) մասնաբաժինը տեղական էներգետիկ հաշվեկշռում, կրճատելու ջերմոցային գազերի արտանետումները և հասնելու դրական զգալի խնայողությունների:

ԵՄ աջակցությունը ԱԼԳ տարածաշրջանում ՔԴ խթանմանը

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կարողությունների զարգացումը մի շարք գործողությունների ամբողջություն է, որն ուղղված է էներգետիկ և կլիմայական քաղաքականության ոլորտում Դաշնագիրը ստորագրողների, աջակիցների, ազգային և տարածքային համակարգողների փորձաքննության ամրապնդմանը՝ մի շարք թեմատիկ սեմինարների, վեբինարների և դասընթացների, ուսումնական շրջագայությունների, անձնակազմի փոխանակումների, անհատական խորհրդատվությունների և այլ միջոցներով:

I փուլում (2011-2016 թթ.), ՔԴ Արևելքի՝ կարողությունների զարգացման միջոցառումները կենտրոնացած էին ՔԴ նախաձեռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև համայնքներին ներգրավելու վրա, որպեսզի վերջիններս միանան Դաշնագրին: Ծրագրի 1-ին փուլում ՔԴ Արևելքի գրասենյակը կազմակերպել է մի շարք դասընթացներ, որոնք ուղղված էին ԿԷԶԳԾ-ի մշակման գործում քաղաքապետարանի աշխատակազմի կարողությունների զարգացմանը և օգնել է ՔԴ ստորագրողներին պատրաստելու իրենց առաջին ռազմավարությունները ԱԼԳ տարածաշրջանում:

II փուլում (2016-2021 թթ.) կարողությունների զարգացման գործողությունները կենտրոնացան իրականացման ասպեկտների վրա: ՔԴ-ի թիմը համայնքներին օգնեց ավելացնելու իրենց գիտելիքները տեխնիկական և ֆինանսական հարցերում, աջակցեց ՔԴ ստորագրողներին մշակելու իրենց ԿԷԶ(ԿՊ)ԳԾ-ները և պատրաստելու մշտադիտարկման զեկույցներ:

«ԿԷԶ(ԿՊ)ԳԾ-ի իրականացման ֆինանսական ասպեկտների վերաբերյալ դասընթացը իսկապես լավ էր պատրաստված, և բոլոր նստաշրջանները պահանջում էին քննարկումներին և գործնական վարժություններին մեր ակտիվ ներգրավումը: Դա մեզ համար իսկապես օգտակար էր և պարզ: Մենք ուսումնասիրեցինք հիմնական ֆինանսական ցուցանիշները, որոնք պետք է օգտագործվեն էներգաարդյունավետ միջոցառումների գնահատման համար, սովորեցինք ինչպես մշակել բանկերի համար ընդունելի ծրագրեր և այն, թե ինչ են դոնորներն ակնկալում մեզնից»:

Ալյոնա Ռիասանցևա, Սևերոդոնեցկ (Ուկրաինա)

Արևելյան գործընկերության տարածաշրջանում Քաղաքապետերի դաշնագրի գործունեության 10 տարիների ընթացքում կազմակերպվել է 103 դասընթաց՝ ավելի քան 3,300 վերապատրաստվողների մասնակցությամբ: Արդյունքում, ՔԴ Արևելքի ստորագրողները մշակել և ներկայացրել են 240 ԿԷԶ(ԿՊ)ԳԾ և մշտադիտարկման 75 զեկույց:

«Բելառուսի Հանրապետությունում այժմ տեղումների աճող ինտենսիվության խնդիր ունենք, սակայն անձրևաջրերի կոյուղու համակարգը հարմարեցված չէ կլիմայի նորաստեղծ փոփոխություններին: Դաշնագիր՝ Արևելքի թիմի կողմից անցկացված կլիմայի փոփոխությանը հարմարվողականության դասընթացների արդյունքում Բարանավիչի քաղաքը բարելավել է ԿԷԶԿՊԳԾ-ի շրջանակում ջրային ոլորտում իրականացվելիք միջոցառումները: Դա հաջողությամբ իրականացվեց դասընթացի ժամանակ առաջարկված լուծումների շնորհիվ, որոնք ներառում էին կանաչ, մոխրագույն և կապույտ ենթակառուցվածքների համալիր օգտագործումը»:

Ուլադզիմիր Զուև, Բարանավիչի համայնք (Բելառուս)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2011-2021 թթ. ՔԴ Արևելքի տեխնիկական աջակցության կենտրոնական և ազգային կենտրոնները համապատասխան փորձաքննություն և աջակցություն են տրամադրել ԱլԳ երկրներում Դաշնագրի ստորագրողներին և շահառուներին ընթացք տալով ավելի քան 5000 խորհրդատվական հարցման:



Հայցվող խորհրդատվական աջակցությունը կենտրոնացած էր հետևյալի վրա.

- Քաղաքապետերի դաշնագրին միանալու կարգ
- Նոր պարտավորությունների ստորագրման գործընթաց
- ԿԷՋ(ԿՊ)ԳԾ-ի մշակում և իրականացում
- ԵԱԳ-ի և մեղմման գործողությունների մշակում
- Կլիմայական ռիսկերի և խոցելիության գնահատում
- Համայնքային ծրագրերի ֆինանսավորման հնարավորություններ
- Մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստում և Համատեղ հետազոտությունների կենտրոնի հետադարձ կապի մեկնաբանություն
- Տարբեր ոլորտների խոցելիության նկարագրության և հնարավոր հարմարվողականության գործողությունների կատարելագործում

ՔԱՂԱՔԻՑ ՔԱՂԱՔ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2018 թվականին ՔԴ Արևելք ծրագրի թիմը մեկնարկել է քաղաքից քաղաք փոխանակման նոր ծրագիրը՝ երկու տարբեր մակարդակներում՝ քաղաքական (քաղաքապետեր/փոխքաղաքապետեր) և տեխնիկական (էներգետիկ կառավարիչներ) մի շարք ուսումնական այցերի միջոցով էներգաարդյունավետության, կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության քաղաքականության ոլորտում ստորագրողների գաղափարների, փորձի և լավագույն գործելակերպի փոխանակման հարթակ ստեղծելու համար: Ծրագիրն իր մասնակիցներին օգնեց հարստացնելու իրենց գիտելիքները, ձեռք բերելու գործնական հմտություններ և արդյունավետ լուծումներ գտնելու թեմատիկ կլաստերներում, որոնք ընդգրկում են քաղաքային ԿԷՋ(ԿՊ)ԳԾ-ի հիմնական ոլորտները:

Քաղաքապետերի մակարդակի 1 ուսումնական այց դեպի Ռիգա և Ելգավա (Լատվիա)՝ 9 վայր երկու քաղաքներում՝ 18 մասնակից ԱլԳ 6 երկրներից

«Ծրագիրը կազմակերպվել էր ինտենսիվ և օգտակար ձևով: Մենք հնարավորություն ունեցանք ծանոթանալու էներգաարդյունավետության ոլորտում առաջատար ծրագրերի տեխնիկական տվյալներին և լուծումներին և հարստացնելու ԿԷՋԿՊԳԾ մշակման գործընթացի վերաբերյալ մեր գիտելիքները: Ես շնորհակալ եմ ՔԴ Արևելք ծրագրին այս գործունեության համար, որը խթանում և խրախուսում է աշխատանքի ավելի արդյունավետ կատարումը մեր համայնքներում»:

Թամար Պուրցելաձե
Գուրջաան (Վրաստան)

«Եվրոպական միության և Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքի գրասենյակի աջակցությամբ ես և գործընկերներս 6 երկրներից հիանալի հնարավորություն ունեցանք 2019 թվականին այցելելու Ռիգա և Ելգավա (Լատվիա): Հարկ է նշել, որ նախկին ԽՍՀՄ երկրների փորձը շատ համապատասխան և հետաքրքիր է ԱլԳ երկրների համար, քանի որ, սկզբունքորեն, մենք նման մարտահրավերներ և խնդիրներ ենք ունեցել 1991 թվականին: Բոլոր այցելությունները մանրամասն ծրագրված էին, և ես շնորհակալ եմ ՔԴ Արևելքի թիմին՝ նման ինտենսիվ ուսումնական շրջագայության համար: Մենք ուղեցույցներ ենք ստացել այն մասին, թե որ ուղղություններով պետք է շարժվենք և ինչպես պետք է մեր համայնքներում էներգաարդյունավետության ծրագրեր իրականացնենք: Որպես քաղաքապետ՝ ես պատրաստվում եմ կիրառելու այն դասերը, որոնք սովորել եմ Ռիգայի և Ելգավայի իմ գործընկերներից: Մասնավորապես, ես պատրաստվում եմ մշակելու բնակելի շենքի վերանորոգման տեղական ծրագիր՝ բազմաբնակարան շենքերի ջերմային արդիականացման համաֆինանսավորման նպատակով»:

Յուրի Ֆորմիչև
Սլավուտիչի քաղաքապետ (Ուկրաինա)

Տեխնիկական մակարդակի 13 ուսումնական այցեր ՔԴ ստորագրող ակտիվ համայնքներ՝ հյուրընկալող 8 քաղաքներ. 84 մասնակիցներ Հայաստանից, Բելառուսից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից,

մշակված և ներկայացված 25 ԿԷՋԿՊԳԾ:

ԿԷԶԿՊԳԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ*



* Ինչպես սահմանված է Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրերում (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ)

Գործարար կապերի հաստատում և համագործակցություն հիմնական շահառուների հետ

ՔԴ-ն ներառված է ազգային քաղաքականություններում և ռազմավարություններում

Էներգետիկ և կլիմայական նպատակների ընդգրկումն ազգային քաղաքականության և ռազմավարության մեջ, ԱլԳ երկրներում ՔԴ զարգացման կայունության երաշխավորումը և Քաղաքապետերի դաշնագրի էներգետիկ և կլիմայական նպատակների հարմարեցումը տարածաշրջանային համատեքստին ՔԴ Արևելքի ռազմավարական նպատակներից են: Կայուն էներգետիկ և կլիմայական պլանավորումը, որը հիմնված է ՔԴ մեթոդաբանության և գործիքների՝ որպես Արևելյան գործընկերության տարածաշրջանի ստորագրողների հատուկ կարիքներին հարմարեցված արդյունավետ գործիքակազմի վրա, արդեն ներառվել է ԱլԳ յուրաքանչյուր երկրի ազգային մակարդակում գործող մի շարք կարևոր ռազմավարական փաստաթղթերում:

Համայնքային զարգացման համակարգման հարթակ

2018 թվականի դեկտեմբերին ՔԴ Արևելք ծրագիրը նախաձեռնեց Արևելյան գործընկերության երկրներում Դաշնագիրը ստորագրած համայնքների համագործակցության և գործարար կապերի հաստատման նոր ձևաչափ՝ Համայնքային զարգացման համակարգման հարթակ (ՀԶՀՀ): Այն ուղղված է տեղական և տարածքային իշխանությունների, ազգային և միջազգային շահառուների միջև երկխոսության ամրապնդմանը և խթանմանը՝ կայուն էներգետիկ զարգացմանն ու կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների հաջող իրականացման համար համայնքներում բարենպաստ միջավայր ստեղծելու համար:

ՀԶՀՀ անդամակցությունը մասնակից համայնքներին հնարավորություն է տալիս քննարկելու և կիսվելու կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության վերաբերյալ լավագույն գործելակերպով՝ իրենց համար առաջնահերթություն ներկայացնող ոլորտներում համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու համար: ՀԶՀՀ-ի անդամները նաև օգտվում են ֆինանսավորման տարբեր հնարավորություններից՝ իրենց էներգետիկ կախվածությունը նվազեցնելու և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունն ապահովելու համար՝ այդպիսով բարելավելով իրենց քաղաքացիների կյանքի որակը:

Հիմնական նպատակները՝

- էներգետիկ և կլիմայական ոլորտում ազգային ռազմավարությունների և գերակայությունների քննարկում և ձևավորում
- օժանդակել ՔԴ ստորագրողներին՝ Դաշնագրի շրջանակում իրենց պարտավորությունները կատարելու գործում
- բարելավել ՔԴ ստորագրողների շրջանում հաղորդակցությունը, նոու-հաուի և փորձի փոխանակումը, տեխնոլոգիաների փոխանցումը
- սահմանել ազգային ճանապարհային քարտեզների մշակման շրջանակ՝ խոչընդոտները լուծելու և խթանող գործոնները բարելավելու համար՝ էներգետիկայի և կլիմայի ոլորտում համայնքային ներդրումների հնարավորություն ստեղծելով
- տեխնիկական աջակցություն տրամադրել տեղական իշխանություններին՝ իրենց ԿԷԶ(ԿՊ)ԳԾ-ները իրականացնելու և մշտադիտարկելու հարցում
- նպաստել ազգային մակարդակում առկա էներգետիկ և կլիմայական նախաձեռնությունների համակարգմանը և ապահովել դրանց միջև սիներգիան

Անդամներ	Երկիր	Դաշնագրի ակումբը	Քաղաքապետեր	Նախագահ
33	ՀԱՅԱՍՏԱՆ	Դաշնագրի ակումբը Հայաստանում	1*	Սպիտակ
32	ԲԵԼԱՌՈՒՍ	Քաղաքապետերի դաշնագրի ակումբը Բելառուսում	2	Պոլակ, Բրեստ
42	ՄՈԼԴՈՎԱ	Կայուն տեղական զարգացման հարթակ	4	Կանտեմիր, Յալովենի, Ստրաշենի
30	ՎՐԱՍՏԱՆ	Վրաստանի քաղաքապետերի ակումբ	4	Ռուսթավի
168	ՈՒԿՐԱԻՆԱ	Համայնքային հարթակ՝ հանուն կլիմայի և էներգիայի	8	—

* Հանդիպումների թիվը

Ազգային ճանապարհային քարտեզներ

ՔԴ Արևելքի փորձագետների աջակցությամբ յուրաքանչյուր երկիր քաղաքականություն մշակողների և այլ շահառուների համար ռազմավարական ուղեցույց՝ «Ազգային ճանապարհային քարտեզ» է մշակել՝ նպատակ ունենալով աջակցելու Դաշնագրի համայնքներին՝ ստեղծելու բարենպաստ շրջանակ տեղական էներգետիկ և կլիմայական քաղաքականության արդյունավետ իրականացման, ինչպես նաև CO_2 արտանետումների կրճատման, կլիմայական դիմակայունությունը բարելավելու և էներգետիկ աղքատությունը նվազեցնելու իրենց կամավոր պարտավորությունների իրականացման հարցում: Ազգային ճանապարհային քարտեզները վերանայում և առաջարկություններ են տրամադրում ներդրումներ ներգրավելու համար կարգավորող և ինստիտուցիոնալ միջավայրի, ՔԴ ստորագրողների ԿԷԶԿՊԳԾ-ների շրջանակում էներգախնայողության նախագծերի իրականացման համար արդյունավետ պլանավորման և ֆինանսավորման մեծացման հիմնական խոչընդոտների ու շարժիչների և այլնի վերաբերյալ:

Համայնքային ծրագրերի իրականացման առանցքային խոչընդոտները և խթանները

	Խոչընդոտներ	Խթաններ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ	• Հանրային/համայնքային սահմանափակ միջոցներ և ֆինանսավորման աղբյուրների սահմանափակ հասանելիություն • Տեղական իշխանությունների՝ բանկերի համար ընդունելի ծրագրեր մշակելու և իրականացնելու անբավարար կարողություններ • Ներդրումներ պլանավորելու և ներգրավելու ներքին համայնքային փորձի պակաս	• Ազգային/միջազգային դոնորների կողմից դրամաշնորհների համաֆինանսավորման ապահովում և ֆինանսավորման այլ գործիքների հասանելիություն • Տեղական իշխանությունների՝ բանկերի կողմից ընդունելի բարձրորակ ծրագրեր մշակելու կարողությունների զարգացում • Ներդրումներ ներգրավելու և առկա ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ փորձի և լավագույն գործելակերպի փոխանակում
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ	• Թերի զարգացած օրենսդրություն և կարգավորող դաշտ՝ հարկադիր կատարման դրույթների հետ միասին • Ծրագրի փաստաթղթերի հետ կապված անհամապատասխանություններ ազգային օրենսդրության և Միջազգային ֆինանսական ինստիտուտների պահանջների միջև • Բանկային երաշխիքների թերզարգացած շուկա և ներդրողների իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակ	• Համապատասխան կարգավորիչ դրույթների մշակում և շարունակական աջակցություն ընդունված բոլոր կանոնակարգերի կիրառմանը • Ազգային կարգավորիչ դաշտի ներդաշնակեցում դոնորների և միջազգային ֆինանսական ինստիտուտների պահանջներին • Համապատասխան երաշխիքների ապահովում, որոնք կնպաստեն էներգաարդյունավետության ոլորտում ներդրումների նկատմամբ ֆինանսական ինստիտուտների վստահության ամրապնդմանը
ԿԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ	• Համայնքների՝ Միջազգային ֆինանսական ինստիտուտների, դոնորների և ներդրողների պահանջների հիման վրա ծրագրեր պլանավորելու և կառավարելու վարչական և տեխնիկական անբավարար կարողություններ • Տեղական անձնակազմի, ինչպես նաև կապալառուների և նախագծողների մասնագիտական տեխնիկական հմտությունների և փորձի պակաս • Համայնքային ենթակառուցվածքների տեխնիկական վատ պայմաններ	• Համայնքների կարողությունների զարգացում՝ ծրագրի պլանավորման, կառավարման, դոնորների և ներդրողների հետ համագործակցության ոլորտներում • Համայնքային ակտիվների էներգետիկ կատարողականի համար հիմքերի ստեղծում, ոչ դրամական օգուտների քանակական գնահատում • Բարձր որակի նախագծում և միջամտությունների ծախսարդյունավետության ապահովում, արդյունքների մշտադիտարկում և փաստաթղթավորում՝ խնայողություններից մարումներ ապահովելու համար:

Ֆինանսավորման հասանելիություն

Դասընթացներ և համագործակցության հաստատման միջոցառումներ

ԱԼԳ երկրներում Դաշնագրի ստորագրողներին խրախուսելու և Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների իրենց ծրագրերը (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) որոշակի գործողությունների վերածելու և անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու հնարավորություն տալու համար, կազմակերպվել են մի շարք հատուկ դասընթացներ և համագործակցության հաստատման միջոցառումներ: Ստացված գիտելիքներն ու գործնական հմտությունները **համայնքներին օգնեցին** դոնոր համայնքի հիմնական պահանջներին համապատասխան **իրենց ծրագրային գաղափարները դարձնել ծրագրային առաջարկներ** և, այդպիսով, նպաստել իրենց համայնքային գործողությունների ծրագրերի ժամանակին իրականացմանը և ՔԴ նպատակների իրագործմանը:

Մասնակից դոնորները և Միջազգային ֆինանսական ինստիտուտները՝ EBRD, EIB, KFW, GIZ, NEFCO, SIDA, UNDP, USAID, IFC, Համաշխարհային բանկ, տեղական բանկեր և ֆոնդեր՝ ԱԼԳ երկրներում ԵՄ պատվիրակության ներգրավմամբ, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություններ և ծրագրեր (EU4Energy, EU4Climate, EU4Environment և այլն):

Ուշադրության կենտրոնում են՝

- ԿԷԶ(ԿՊ)ԳԾ մշակման և իրականացման ֆինանսական ասպեկտները
- առկա ֆինանսական սխեմաներն ու մեխանիզմները, որոնք կարող են կիրառվել ֆինանսավորում ներգրավելու համար
- բանկերի կողմից ընդունելի իրագործելի և բարձրորակ ծրագրային առաջարկների մշակումը
- Գործարար կապերի հաստատում ՔԴ ստորագրողների և ֆինանսավորող տարբեր ինստիտուտների միջև

Ծրագրերի քանակը յուրաքանչյուր ոլորտում

	Փոքրածավալ լուսավորություն	ՎԷԱ	Կենտրոնացված ջեռուցում	Էներգաարդյունավետ շենքեր	Էներգաարդյունավետ տրանսպորտ	Թափոնների կառավարում	Կլիմա	
Հայաստան	7	8						15
Բելառուս	105	15	5	24			4	153
Վրաստան	4	7		7	7	5	10	40
Մոլդովա				22				22
Ուկրաինա	2		1	12				15
	118	30	6	65	7	5	14	245

Ծրագրային առաջարկների շտեմարան

Էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ոլորտում համայնքային ծրագրային առաջարկների ազգային շտեմարանները՝ ծրագրային առաջարկների շտեմարանները, մշակվել են ԱԼԳ յուրաքանչյուր երկրի համար: Ծրագրային առաջարկների շտեմարանների նպատակն էր բարձրացնել համայնքային ներդրումների տեսանելիությունը և աջակցել համայնքներին՝ գտնելու հավանական ներդրողներ, դոնորներ և գործընկերներ, ինչը պետք է օգնի հավաքելու միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրենց ԿԷԶ(ԿՊ)ԳԾ-ների իրականացման համար: Տվյալների շտեմարանները պարունակում են տեղեկություն պլանավորված ծրագրերի էներգիայի սպառման բազային տվյալների, առաջարկվող գործողությունների բովանդակության, պահանջվող ներդրումների չափի և ակնկալվող արդյունքների վերաբերյալ:

Սիներգիաներ այլ նախաձեռնությունների հետ

Առավել արդյունավետ արդյունքները պահպանելու և ձեռք բերված ազդեցությունն ամրապնդելու համար ՔԴ Արևելքն օգտվել է Արևելյան գործընկերության երկրներում առկա տարբեր հնարավորություններից՝ ԵՄ և այլ միջազգային դոնորների, ծրագրերի և նախաձեռնությունների հետ համագործակցությունը համակարգելու և սիներգիան բարելավելու համար՝ Քաղաքապետերի դաշնագիրը խթանելու և ՔԴ ստորագրողներին իրենց էներգետիկ և կլիմայական պարտավորությունները կատարելու հարցում աջակցություն տրամադրելու նպատակով:

Քաղաքապետերի գլոբալ դաշնագիր

Քաղաքապետերի դաշնագիր՝ ցուցադրական նախագծեր (ՔԴ ՑՆ)

ԵՄ նախաձեռնություններ
EU4Energy
EU4Climate
EU4Environment

Էներգետիկայի և կլիմայի ոլորտում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրեր

Covenant of Mayors for Climate & Energy Eastern Partnership

ԵՄ և միջազգային էներգետիկ և կլիմայական նախաձեռնություններ
«Քաղաքապետեր հանուն տնտեսական զարգացման» (M4EG)
Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ)
Էներգետիկ համայնքի քարտուղարություն
Միջազգային էներգետիկ գործակալություն

Հորիզոն 2020 ծրագրեր

Միջազգային ֆինանսական ինստիտուտներ
EBRD
EIB
E5P
KfW
NEFCO
IFC

Միջազգային զարգացման գործակալություններ
GIZ (Գերմանիա)
USAID (ԱՄՆ)
SIDA (Շվեդիա)
DANIDA (Դանիա)
Polish Aid (Լեհաստան)

ՄԱԿ-ի գործակալություններ
UNECE
UNDP
UNEP
UNIDO

JRC
EUROPEAN COMMISSION

Համատեղ հետազոտությունների կենտրոնի դերը ՔԴ ստորագրողներին աջակցության հարցում

Համատեղ հետազոտությունների կենտրոնը (JRC) Եվրոպական հանձնաժողովի գիտության և գիտելիքի ծառայությունն է, որն աշխատում է գիտնականների հետ՝ ԵՄ քաղաքականության հարցերով անկախ, ապացուցահեն գիտական և տեխնիկական խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու նպատակով հետազոտություններ իրականացնելու համար: Այն առանցքային դեր է խաղում ԵՄ ավելի լավ քաղաքականության համար կոլեկտիվ գիտական գիտելիքների ստեղծման, կառավարման և իմաստավորման գործընթացում և իր հետազոտության արդյունքներով նպաստում է առողջ և անվտանգ միջավայրի, էներգիայի ապահով աղբյուրների, կայուն շարժունակության, սպառողների առողջության և անվտանգության ապահովմանը:
Համատեղ հետազոտությունների կենտրոնը պատասխանատու է նաև «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը տեխնիկական և գիտական աջակցություն տրամադրելու համար: Այն սերտորեն համագործակցում է ՔԴ գրասենյակների հետ՝ ստորագրողներին հստակ տեխնիկական ուղեցույցներ և ձևանմուշներ տրամադրելու համար՝ Քաղաքապետերի դաշնագրի շրջանակում իրենց պարտավորությունների հաջող իրականացմանը օժանդակելու, ինչպես նաև իրականացման գործընթացը և ձեռք բերված արդյունքները մշտադիտարկելու նպատակով:

Մասնավորապես, ՀՀԿ (JRC)-ի աջակցությունը ՔԴ ստորագրողներին ներառում է.

- Նախաձեռնության մեթոդաբանական հիմքի ձևավորում, ներառյալ ուղեցույցներ տեղական իշխանությունների համար
- Հետադարձ կապի ընթացակարգով համայնքների ԿԷՋԿՊԳԾ-ների գնահատում և հաստատում
- ՔԴ նախաձեռնության վերաբերյալ գնահատման հաշվետվությունների մշակում
- Տվյալների հավաքման գործընթացի կատարելագործում
- Տվյալների վերաբերյալ տեխնիկական աշխատանքային խմբի համանախագահություն և քաղաքի արտանետումների, թիրախների, գործողությունների պլանի և Քաղաքապետերի գլոբալ դաշնագրի համար հարմարվողականության նոր «չափորոշիչների» մշակում
- Աշխատանք աշխարհի տարբեր տարածաշրջաններում մեթոդոլոգիական հարմարեցման վրա
- Քաղաքների և մարզերի, տարածաշրջանային փորձագետների համար տեխնիկական ուսուցման և կարողությունների զարգացման գործողությունների իրականացում

Իմացե՛ք ավելին Համատեղ հետազոտությունների կենտրոնի մասին՝ http://ec.europa.eu/dgs/jrc/

Դաշնագրի հաղորդակցությունն ԱԼԳ երկրներում

Հաղորդակցության և խթանման գործողությունները նախատեսում էին Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի նախաձեռնության, դրա թիրախների, հնարավորությունների ու օգուտների, ինչպես նաև ՔԴ Արևելքի արդյունքների և ձեռքբերումների խթանում՝ ազգային և միջազգային մակարդակի տարբեր շահառուների համար իրազեկման տարբեր գործողություններ իրականացնելով, կազմակերպելով և մասնակցելով թեմատիկ միջոցառումների և այլ գործողությունների: Հիմնական նպատակն էր **խթանել «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությունը և խրախուսել Արևելյան գործընկերության երկրների համայնքներին միանալ նախաձեռնությանը** և օգուտ քաղել Դաշնագրի համայնքի անդամ դառնալուց:

Եվրոպական կայուն էներգիայի շաբաթներ և Կայուն էներգիայի օրեր

Արևելյան գործընկերության երկրները ակտիվորեն մասնակցել են **Եվրոպական կայուն էներգիայի շաբաթին (EUSEW)** և իրենց համայնքներում կազմակերպել **Կայուն էներգիայի օրեր (SED)՝** մաքուր և անվտանգ էներգիայի, էներգիայի արդյունավետության, վերականգնվող աղբյուրների ավելի լայն օգտագործման և կայուն զարգացման ոլորտում իրենց համայնքների լավագույն փորձի և նորարարական գաղափարների խթանման և փոխանակման համար:

Կազմակերպված էներգիայի օրեր



Ներգրավված անձանց թիվը



ՔԴ խթանումը ազգային և միջազգային միջոցառումների ժամանակ

Ազդեցություն և վարքագծային փոփոխություններ

- ԱԼԳ երկրներում ՔԴ ստորագրողների բնակչության իրազեկվածության բարձրացում, ովքեր գիտեն նախաձեռնության մասին և աջակցում են իրենց քաղաքապետարաններին իրենց կլիմայական և էներգետիկ նպատակների իրագործման հարցում
- Տեղական իշխանությունները տեղեկացել են ֆինանսական միջոցներ և ներդրումներ ներգրավելու համար հասանելի ֆինանսական գործիքների և մեխանիզմների մասին և այն մասին, թե ինչպես կիրառել դրանք Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրերի (ԿԷԶԿՊԳԾ) իրականացման համար:
- ՔԴ ստորագրող համայնքներում բնակիչների վերաբերմունքը փոխվել է հօգուտ ավելի էներգաարդյունավետ և էկոլոգիապես մաքուր կենսակերպի և տնտեսության
- Համայնքներն ավելի պատասխանատու և ակտիվ են դարձել էներգաարդյունավետության և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության տարբեր միջոցառումների խթանման և իրականացման հարցում
- ՔԴ ստորագրողները ազգային և տարածաշրջանային մակարդակում կիսում են իրենց փորձը և լավագույն գործելակերպը այլ համայնքների հետ՝ ստանձնած պարտավորությունները կատարելու և կայուն զարգացում ապահովելու համար:

ՔԴ ՑՆ. ծրագրերից մինչև իրագործում

«Քաղաքապետերի դաշնագիր՝ ցուցադրական նախագծեր» նախաձեռնությունը (ՔԴ ՑՆ) ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը մշակվել է ի պատասխան Արևելյան գործընկերության տարածաշրջանի 200,000-ից պակաս բնակիչ ունեցող այն փոքր համայնքների առջև ծառացած մարտահրավերների, որոնք ստորագրել են Քաղաքապետերի դաշնագիր նախաձեռնությունը: Ստորագրողներից շատերը տեխնիկական կամ ֆինանսական կարողություն չունեն իրենց Կայուն էներգետիկ զարգացման (և կլիմայի պահպանության) գործողությունների ծրագրերի (ԿԷԶ(ԿՊ)ԳԾ) իրականացման համար, որը հիմնական փաստաթուղթն է, որով սահմանվում է, թե ինչպես է յուրաքանչյուր համայնք հասնելու CO_2-ի կրճատման իր նպատակին: ԵՄ-ն աջակցություն է ցուցաբերում ցուցադրական նախագծերի միջոցով, որոնք ցույց են տալիս, թե ինչպես համայնքները կարող են իրենց ԿԷԶ(ԿՊ)ԳԾ-ները արդյունավետորեն վերածել պրակտիկ գործողությունների:

Ծրագրի տիպային չափը տատանվում է **0,5-ից 1,4 միլիոն եվրոյի սահմաններում**: Ծրագրերն ուղղակիորեն իրականացվում են համայնքների (և նրանց ծրագրային գործընկերների) կողմից, ինչը հետագա ծրագրերի իրականացման համար նրանց ավելի ընդունակ և ուժեղ է դարձնում:

Ներգրավված համայնքները ստանում են **ֆինանսական, վարչական և տեխնիկական աջակցություն**՝ կայուն էներգաարդյունավետության ծրագրեր իրականացնելու համար, որոնք հանգեցնում են համայնքների և քաղաքացիների համար շահագործման ծախսերի և էներգիայի վճարների կրճատմանը՝ միաժամանակ կրճատելով CO_2 արտանետումները:

Իմացի՛ր ավելին ՔԴ ՑՆ ծրագրի մասին՝ www.com-dep.eu

Ընտրված ցուցադրական նախագծերը **կենտրոնանում են հետևյալի վրա՝**

- հասարակական և բնակելի շենքերի վերանորոգում
- կենտրոնացված ջեռուցման համակարգերի արդիականացում
- փողոցների էներգաարդյունավետ լուսավորության ներդրում
- հասարակական տրանսպորտի արդիականացում
- կեղտաջրերի համակարգերում էներգախնայողության բարելավում

Փուլ I

2014 – 2018
19 նախագիծ
/19 համայնք
18,400,000
Եվրո/ ԵՄ
ֆինանսավորում
79%

Փուլ II

2018 – 2021
14 նախագիծ
/15 համայնք
13,800,000
Եվրո/ ԵՄ
ֆինանսավորում
77%



ՔԴ ՑՆ համայնքների գրանցած արդյունքները*՝

- **238** բնակելի և հասարակական շենքերի վերանորոգում
- **97** վերականգնվող էլեկտրաէներգիայի համակարգի տեղադրում
- **35** մանկապարտեզի և դպրոցի շենքերի վերանորոգում
- **10** փողոցային լուսավորության համակարգ
- **10** կենտրոնացված ջեռուցման համակարգի տեղադրում/ արդիականացում
- **1** ջրային համակարգ
- **1** տրանսպորտային համակարգի բարելավում

1,846 աշխատատեղ

* 2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ

ՔԴ Արևելքի հեռանկարները. ո՞րն է հաջորդը

Արևելյան գործընկերության երկրներում գործունեության տասը տարիների ընթացքում «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությունը նշանակալի նվաճումների է հասել և ձեռք բերել եվրոպական ուժեղ բրենդի համբավ, որը գրավիչ է մնում համայնքների համար: Նախաձեռնությունը Եվրոպական միության սահմաններից դուրս արագորեն ակտիվ մասնակցության հասավ:
Այսպիսով, ծրագրի երկու նախորդ փուլերի՝ ՔԴ Արևելք I-ի (2011 – 2015 թթ.) և ՔԴ Արևելք II-ի (2016-2021 թթ.) փորձի հիման վրա **ՔԴ Արևելք III-ը մեկնարկել է տարածաշրջանում էներգետիկ և կլիմայական գործողությունների հետագա զարգացման նպատակով**: Մինչ I փուլը նպատակ ուներ աջակցելու համայնքներին նախաձեռնությանը միանալու գործընթացում, իսկ II փուլը առավելապես կենտրոնացած էր նրանց Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրերի (ԿԷԶԿՊԳԾ) մշակման և իրականացման վրա, III փուլը պետք է ավելի նպատակային աջակցություն ցուցաբերի տարբեր աստիճանի փորձ ունեցող իրական և հավանական ստորագրողներին:

Մասնավորապես, Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք III-ը կանդրադառնա կայուն տեղական զարգացման և կանաչ անցման հետևյալ հիմնական ասպեկտներին.

- Ավելի շատ տեղական իշխանությունների խրախուսել ստորագրել Քաղաքապետերի դաշնագիրը և դրա՝ 2030 թ. թիրախները և մեծացնել տարածքային և ազգային իշխանությունների աջակցությունը ՔԴ ստորագրողներին
- Աջակցություն ցուցաբերել ստորագրողներին՝ ԿԷԶԿՊԳԾ-ների մշակման և իրականացման գործընթացում և տեղական մակարդակում պլանավորման և կառավարման բարելավման համար նրանց տեխնիկական կարողությունների ձևավորման հարցում
- Նպատակային աջակցություն տրամադրել՝ ՔԴ ստորագրողների կողմից համայնքային, մասնավորապես՝ նրանց ԿԷԶԿՊԳԾ-ների մաս կազմող նախագծերի ֆինանսավորման հասանելիությունը հեշտացնելու համար
- Համայնքի բնակչության շրջանում տեղական էներգետիկ և կլիմայական գործողությունների կարևորության մասին իրազեկվածության բարձրացում
- Տեղական համայնքներին արդյունավետ գործիքների տրամադրում՝ տեղական մարտահրավերների հաղթահարմանը ակտիվորեն նպաստելու համար

EU4Energy

Covenant of Mayors
for Climate & Energy
Eastern Partnership

Ծրագիրն իրականացնում է «Էներջի սիթիզ» կազմակերպության կողմից ղեկավարվող կոնսորցիումը

ENERGYCITIES

Climate Alliance

KOMMUNAL KREDIT PUBLIC CONSULTING

COMMUNITIES ASSOCIATION of ARMENIA

Interakcia

EEC·ЕЕС

AEER

МУ Association «Energy Efficient Cities of Ukraine»

«ԵՄ-ն էներգիայի համար» (EU4Energy) նախաձեռնությունն ընդգրկում է ԵՄ ողջ աջակցությունը Արևելյան գործընկերության երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում էներգիայի մատակարարման, անվտանգության և կապի բարելավման, ինչպես նաև էներգիայի արդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման խթանման համար: Դա արվում է այնպիսի նախագծերի և ծրագրերի ֆինանսավորման միջոցով, որոնք օգնում են բարեփոխելու էներգետիկ շուկաները և նվազեցնելու ազգային էներգետիկ կախվածությունն ու սպառումը: Ավելի երկարաժամկետ հեռանկարում սա էներգիայի մատակարարումն ավելի հուսալի, թափանցիկ և մատչելի է դարձնում՝ այդպիսով նվազեցնելով էներգետիկ աղքատությունը և էներգիայի վճարները ինչպես քաղաքացիների, այնպես էլ մասնավոր հատվածի համար:
Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.EU4Energy.eu**

Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը «ԵՄ-ն էներգիայի համար» նախաձեռնության շրջանակում
Այս հրապարակման մեջ արտահայտված տեսակետները միայն ՔԴ Արևելքի ծրագրինն են, և Եվրոպական միությունը պատասխանատվություն չի կրում դրանց համար:

www.com-east.eu